

Գ. Պահեցողութեան պարտականութեան էն ազատ էին հիւանդները, տկարներն ու ծերեր, որոց թոյլ կու տայ Յաճախապատումը սակաւ ինչ գինի եւ միս ճաշակել (85-6): Կոստանդին Ա Նոյնպէս կը պատուիրէ պահքը՝ « բայց ի հարկէ հիւանդութեան» (Կիր. 171): Ադոնք այդ լուծման համար որ եւ է պայման չեն դներ, տկարաց արդէն ճնշեալ մարմինը կարօտ չէր կամաւոր նոր ճնշմանց, այսչափ: Ընդ հակառակն Ալաւկայ որդին աւելի աններող է: Սա օրինաց տառը յարգող քան ոգին, վերջին հարկի մէջ միայն թոյլ կու տայ լուծումը. այս ինքն երբ բժիշկը վկայէ՝ թէ հիւանդն «տանց կերակրոյ մեռանի»: Իսկ երբ առողջանայ, անոր փոխարէն կը հրամայէ պահել չորս Եօթնեակ՝ եթէ լուծածը չորեքշաբթի էր. վեց Եօթնեակ՝ եթէ ուրբաթ էր, ու Պենտեկոստէից նախընթաց տասն օրերը՝ եթէ աղուհացից օր մ'էր: Բայց եթէ հիւանդը մեռնէր, այդ սոսկալի եւ անդառնալի հատուցումը պիտի ընէին իւր ընտանիքը (Կէ): Տարօրինակ ուղեղներ եղած են ամէն ժամանակ, որոնք զուցէ հետեւողներ ալ ունեցած են միամիտ ժողովրդեան մէջ:

4. — Քառասնորդը: — Ի հնուց այս անուամբ ծանօթ են մեր մէջ երեք քա-